ՀՏԴ 82.09+891.981

70-ԱԿԱՆ ԹԹ. ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ

Հ.Գ.Մուսայելյան
գրականության և ժողովրդական ստեղծագործության ամբիոն

Ուսումնասիրությունը նպատակադրված է 70-ական թթ. հայ բանաստեղծության զարգացման մի քանի էական առանձնահատկությունների բացահայտմանը: Իրականության գեղարվեստական յուրացման համապատասխան միջոցների վրա փորձ է կատարվել ուրվագծելու հիշյալ սերնդի բանաստեղծական ընդհանուր դիմագիծը:

20-րդ դարավերջի հայ և համաշխարհային պոեզիայում գերիշխող ավանգարդիստական հետզհետե կորցնում է իր նկատմամբ գրական ընթացքի հենարարությունը: Ավանգարդի հիմնական միջոցը կազմող մեթոդները /դիմարտանարություն, լեզվատեսական ու կոմպոզիցիոն համակարգերի խճճումը և այլն/ դանդաղում են ոլորվել այդպիսիք էական արժեք ներկայացնելուց և հոգեոր նոր պահանջների առկայության արդի պայմաններում դարձյալ ենթարկվում են քննականոն մաշվածության: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ գրական ոչ մի ուղղություն կամ հոսանք ինքնանպատակ չի հնանում ու կորչում այս կամ այն ժամանակի մեջ, այլև մտանակիրներն տարբերությամբ է բոլոր ժամանակների գրական ուղղություններում, ապա ավանգարդի ժառանգությունը ևս նրկար ժամանակ իրեն զգացնել կտա գրական ընթացքի և գեղագիտական արժեքների կայացման գործընթացներում: Բավական է թեկուզ նկատել, որ այս հոսանքն անհամեմատ ակտիվացրեց քննադատական գիտակցությունը, մտքի ու դատողության նկատմամբ գրողի առավել հակվածությունը. հանգամանք, որը թեկուզ դրված էր իրերի անխուսափելիությունը զգալու նոր պահանջներով:

Գեղարվեստական գրականությունը նրանք միանշանակորեն չի կարող տեսականացվել, սակայն մտքի հետզհետե գերակայությունը նրանում թերևս անժխտելի է թվում: «Բանաստեղծությունը արվեստի բանային մտածելու արվեստի մեջ է»,- ժամանակին գրել է Հարագիոսը: Խնդիրը տակավին գրական նոր հերոսն է, կյանքի բոլոր ասպեկտների ակամա համադրման արդյունքում նրանոր կողմնորոշումները: Երբեմնի երկրորդական թվացող փաստերն ու իրադարձությունները կյանքի ու գրականության գոյատևման համար այժմ դարձել են ներգործուն կարևորագույն տարրեր և հետզհետե առարկայացնում են նրանց կանխվածությունը շրջակա աշխարհից: Նմանօրինակ պայմաններում գրականությունը, արվեստն առհասարակ դուրս են գալիս իրականության մակերես փորձելով գտնել վերոհիշյալ երևույթի արտաքին պատճառները և ըստ այդմ էլ տարածվում են կորցնելով հենակետերի համամասնությունը: Նոր մարդն այսօր կարծես թե գտնվում է ինչ-որ բանի եզրին, որտեղից պետք է սկսվի մի նոր փուլ, հաջորդը խորհրդավոր ու անքննելի: Մինչդեռ սինը, այնուամենայնիվ, միշտ ներկա է. խնդիրն այն է, թե որտեղ, մեր գիտակցության ու կենսաձևի որ մասնիկներում: Եթե այն անհետանում է, ապա ոչ թե թաղվելու հետևանքով, այլև մի ուրիշ կերպարանքով ու առավել կենդանի միջավայրում վերածնվելու արդյունքում, ընդհանուր շարժման մեջ առավել տարածական նշանակություն ձեռք բերելու մտայնությամբ: Ասվածի համար թերևս վկայություն կարող է հանդիսանալ XX դարի 70-80-ական թվականների հայ բանաստեղծությունը, որ իրենից ասաջ շուրջ մեկ տասնամյակի բուռն վեճերից ու արժեքների կասկածահարույց տեղաշարժերից հետո մի տեսակ անմիջականություն ու կենդանի շունչ հաղորդեց գրական հետագա ընթացքին: Ակամա հուշվի նստելով իր անմիջական նախորդների փորձի ու ձեռքբերումների հետ, այս սերունդը ձգտեց ստեղծել իր սեփական տարածքները, բանաստեղծական իր մեթոդներն ու առանձնահատկությունները: Ինչ խոսք, այն ասպարեզ իջավ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ գրական մամուլում բուռն վեճեր էին ընթանում 60-ականների բանաստեղծական մտածողության ու գեղագիտական կողմնորոշումների շուրջ, ըստ այժմ էլ առավել դժվար ու պատասխանատու էր նրա մուտքը: Սակայն յուրաքանչյուր սերնդափոխություն ինքնին արդեն նոր փուլ է, որոշակի շարժում, որ այսպես թե այնպես քերելու է իր տեսակն ու օրենքները, դրանք բոլոր դեպքերում տարբերվելու են իրենց նախկիններից: Երևույթների այսօրինակ զարգացումներում 70-ական թթ. ուրվագծվեց բանաստեղծական փոքր-ինչ մոռացված ու միաժամանակ թարմ մի տեսակ առավել թեթևացած մտքի ու երևակայության ոչ միշտ անհրաժեշտ ծանրաբեռնվածությունից: Գրաբնեանական ստվերը, կարելի է ասել, բարեհաճ գտնվեց այս սերնդի նկատմամբ, քանզի վերջինս իր բանաստեղծական կենցաղքով մտահոգության տեղիք տալու հավակնություններ կարծես թե չունեն: Այն առավել կենտրոնակ էր, իրական ու շոշափելի, ինչը /երբեմն իրավացիորեն/ որպես առավելություն էր դիտվում նախորդների նկատմամբ: Անդրադառնալով 70-ական թթ. ասպարեզ իջած բանաստեղծների ստեղծագործական հիմնական առանձնահատկություններին Ազատ Եղիազարյանը նկատում է. «Նրանք ունեն մի էական առավելություն. այստեղ մարդկային խոհերն ու զգացումները,

երբեմն մի քիչ անաստված ձևով, բացվում են ընթերցողի հայացքին իրենց մարդկային ջերմությամբ ու ինքնատիպությամբ: Երևում է այսօրվա կոնկրետ, իրական Հայաստանի բնապատկերը, երևում է ապրող ու զգացող նրիտասարդ մարդը, որը կեցվածք չի ընդունում, որը չի ուզում զարմացնել,այլ ապրում է, խորհում, զգում - իր ժամանակին հետևողական» Ա. Եղիազարյան, «Մարդը ներսից», «Սով. գրող» հրատ.,1985թ., էջ108-109/:

Այդ շրջանի առավել աչքի ընկնող ներկայացուցիչներից են Հրաչյա Սարուխանը, Ղուկաս Սիրունյանը, Արմեն Շեկոյանը, Հակոբ Մովսիսը և էլի ուրիշներ, որոնք ունեն սեփական ձայնի որոնման իրենց ուղիները, միմյանցից տարբերվելու ակնհայտ ձգտումը, և, որ ամենաբնորոշն է այս սերնդի համար, բանաստեղծականի, այսպես կոչված, կիսաավանդական ըմբռնումը: Մարդու և աշխարհի փոխհարաբերության խնդիրը միշտ էլ դրամատիկ բովանդակություն է ստացել այս կամ այն դարաշրջանի բանաստեղծական զարգացումներում: «Ես այնտեղ եմ,- գրում է Մայակովսկին, -որտեղ ցավն է»: Սա պոեզիայի ընդհանրական կերպն է, նրա բնութագրման էական հատկություններից մեկը, որ ի մի է բերում հասարակային բանաստեղծության ողջ կենսագրությունը ժամանակ առ ժամանակ ստանալով նոր ձևեր ու եղանակներ:

Հր.Սարուխանի պոեզիայում ցավը դառնում է կենսագրություն, ինքնահայթհայթման անհրաժեշտ նախադայման, որ փոքր-ինչ հնում մնալով կյանքի կոնկրետ արտահայտություններից, վերածվում է բոհեմական թախծի՝ խոր ու ապրված.

Տիվնների տակ թաղ սեղը քսի:
Մտմերը հալվեն կաթի առ կաթի:
Մի քիչ հաց լիներ ու մի քիչ գինի...
Ատիր, խնդրում եմ, շուրթերս ատիր:

Բառերն այստեղ ունեն պատմություն, քանզի նրանցում առկա են ապրված զգացումները, հոգեբանական վիճակները, որոնք ավարտուն տեսք տալով բանաստեղծական տողերին՝ շարունակում են իրենց ներքին շարժումն ու զարգացումները: Իր «Եզրագծեր» առաջին ժողովածուից առայսօր Սարուխանը հետու մնաց նոտարարական ճիգերից՝ առավել շատ ունկնդիրը լինելով իր նախորդների՝ Տիրյանի, Չարենցի, Եսենինի հոգեկրաբար ձայներին: Գիտատեսնիկական հեղափոխությունը, պոեզիայի ազատարդկայնացման ձեռնարկումները չճնշեցին նրա գեղագիտական համակարգը, որ մաքուր քնարերգությունը հաղթահարեց ժամանակակից հերոսի հոգևոր բարդույթները:

Իրերի հետ հարաբերության մեջ մտնելու մարդու հեռանկարը, ի վերջո, ծնվում է նրա հոգևոր պահանջներից: Մարդը տիրում է արտաքին աշխարհին՝ այն վերջնական արդյունքում ծառայեցնելու իր հոգևոր պահանջներին: Միակ անհասանելի թվացող բարձունքը, որին տակավին ձգտում է հասնել մարդը, նա հենց ինքն է, և ոչ երբեք այն իրերն ու երևույթները, որոնք երբեմն առ երբեմն կարող են փոխել աշխարհի հետ հարաբերության մեջ մտնելու նրա եղանակները: Արվեստագետը մարդու իր իսկ տեսակի գեղարվեստական ձևն է. հանգամանք, որը բոլոր դեպքերի ու ժամանակների համար կարող է փրկություն գտնել իսկական արվեստի համար: Եթե փորձենք, օրինակ, իր սերնդակիցների մեջ տարբերակումներ ուրվագծել Հրաչյա Սարուխանի ինքնատիպության համար, ապա նրա ամենաակներև առանձնահատկությունը, թերևս, հենց այս է՝ գեղարվեստական սեփական տեսակին հավատարիմ մնալու սկզբունքը:

Իրականի ու խորհրդանշականի հետաքրքիր զուգորդումներ է ներկայացնում Ղուկաս Սիրունյանի պոեզիան: Կենսական կոնկրետ ազդակները պատմությունը, մարդու և թնության փոխհարաբերությունները, իրերի հավերժական շրջապտույտը նրա սոնոզագործություններում փոխներթափանցվում են միմյանց իմաստային նշանակության մեջ՝ համադրելով բարու ու գեղեցիկի անընդհատ նորոգվող իմաստությունը: Իրականության գաղտնիքներին մերելու բանաստեղծի ձգտումը համադրում է իմաստուն կենսասիրության և իրերի խաղաղ գոյակցության ներըմբռնումները՝ շերտ առ շերտ ընդլայնելով բանաստեղծության ներքին տարածքները.

Արցունքը բարձրանում է իրերից,
Բարձրանում մեր ապրած կյանքն ի վեր...
Մենք չենք այտասվում-
Մենք վերադարձնում ենք իրերի
Կորցրած թնշությունը:

Աշխարհն ընկալելով իբրև իրադարձություն, բանաստեղծը ևս իրեն զգում է նրա անբաժանելի մի մասը, իր մեջ կրում նրա տարաբնույթ դրսևորումների ներքին խորհուրդը՝ այդպիսով փորձելով կատվել նրա արարման ընթացքի հետ: Նյութևն խուսափելով երևույթների ու կերպարների կոնկրետ առարկայական հատկանիշների նկարագրություններից, բանաստեղծն ամբողջ խորհրդավորությունը տեսնում է նրանց նախաստեղծ գոյակցության մեջ, իմաստավորում «այնկողմնայինը», ուր նրանք ձեռք են բերում նոր որակ՝ հայտնվելով իրադարձությունների ներքին պլանում:

Բանաստեղծական խոսքի համար կայուն հենակետեր որոնող հեղինակ է Արսեն Շեկոյանը: Կյանքն իր բազմազան դրսևորումներով հանդիպած թատերացում է նրա ստեղծագործությունների ներս մի տենակ անապատանիրներն, հանկարծակի ու անմիջական և նրբերեն հասարակ ու մաշված թվացող բառերն ու դարձվածքները ձեռք են բերում ապրելու նոր միջավայր.

Այսքան մաքուր, այսքան խաղաղ
և սա կյանքն է, ոչ թե մահը:
Եվ ժամերը միասաղաղ
Էլ չեն ճնշում: Եվ նոր պահը
ընդունում է մարմինը իմ
և ծածկում է ինձ անցյալից:
Լռություն է: Էլ չեն հնչում
Ժամերը գոյշ ու ճանձրալի:

Ա. Շեկոյանի ստեղծագործություններում առօրյա երևույթներն ու իրավիճակները ձեռք են բերում իրենց կոնկրետ արտահայտությունները՝ պարզունակ թվացող լուծումներում ներկայացնելով հոգեբանական որոշակի իրադրություն: Անշուշտ ու անբանաստեղծական թվացող բառերի ու խորհրդանիշների համար նա գտնում է բնորդ նրբագծեր, ստեղծում «խաղային» իրավիճակներ այնպես, որ այդ «խաղը» հենց դառնում է բանաստեղծական յուրօրինակ արժեք: Բանաստեղծի նախընտրած թեմաները նույնքան սովորական են ու առօրյա. հայրենի տուն, ծննդավայրի կարտ, վաղվա օրվա հանդեպ հույսեր ու տագնապներ, սեր ու հիշողություն և այլն: Եվ այս ամենը՝ բնաբական թեթև մատուցմամբ, պրոզաիկ բառերի ու արտահայտությունների անսպասելի հայտնությամբ, բայց միաժամանակ հավատարիմ բանաստեղծության բուն խորհրդին ու էությանը:

70-80-ական թթ. հայ բանաստեղծության մեջ իրենց զգացնել տվեցին, այսպես կոչված, աստվածաշնչյան, դիցաբանական հիրոմներն ու խորհրդանշանները, որոնք յուրօրինակ փորձ էին ժամանակակից պոեզիայի մեջ ավանդական արժեքների ներթափանցումների: Այսօրինակ արժեքների յուրացման փորձեր ենք տեսնում սերնդի երևելի ներկայացուցիչների՝ Հակոբ Մովսեսի, Աշոտ Ավդալյանի, մի քիչ ուշ՝ Հրաչյա Բեյլերյանի, Զավեն Բեկյանի և այլոց երկերում:

Միֆաստեղծման հնարանքները Հ.Մովսեսի ստեղծագործություններում սուգ բիբլիական իմաստներ չեն հետապնդում: Նրանք հնարավորություն են տալիս բանաստեղծին ընդլայնելու պոեզիայի փոխաբերականության հատկանիշները, նպաստելու անհատի ենթագիտակցական աշխարհի պատկերման բազմազանությունը: Հետ մնալով բնապաշտական ավանդական եղանակներից, բանաստեղծը նոր դերակատարություն է սահմանում մարդու գոյաբիլիտիվայության հիմքում բնության՝ որպես շոշափելի կենցության հատար: Զգալով նյութը, ներձնելով առարկային վեր կանգնել նրանից, նրա գերիշխանությանը տալ հարաբերական արժեք կենցության նախապայմանի նկատմամբ. այս է սահա Մովսեսի բանաստեղծական էական առանձնահատկություններից մեկը, որով նա տարբերվում է իր սերնդակիցներից:

Ես կամ, սակայն ինձ չեմ տեսնում-
քամին աչքերիս մեջ ծղոտ փչեց:-
Տեսնք, ստվերների վրա օրորվում են մարդիկները:

Երևույթի մետաֆիզիկ ընկալումը բանաստեղծի համար նոր հեռանկարներ է խոստանում աշխարհի հետ փոխհարաբերության ընթացքում:

Հաղթահարել նյութը՝ նշանակում է ազատանալ գոյի խորհուրդը, ձեռք բերել այլ կերպ ապրելու հավանականություն: Այս առումով Հ. Մովսեսի պոեզիան առնչություններ ունի Հենրիկ Էդոյանի աշխարհընկալման որոշ սկզբունքների հետ: «Ես կամ, սակայն ինձ չեմ տեսնում» տողն իր ենթատեքստային առումով հիշեցնում է Էդոյանի նույնիմաստ արտահայտությունը. «Ես ձեզ եմ բերում իմ մարմինը, միակ ակամատեսը իմ *հավերժական բացակայության*»: Սակայն նթե Հ.Էդոյանի մոտ այդօրինակ բացակա ներկայությունը հիմնականում ձեռք է բերում *դիալեկտիկական ավարտվածության*, Հ.Մովսեսի *ստեղծագործություններում երևույթների* հատկանիշները շատ հաճախ չեն հեռանում նկարին միակցությունների, ինչի պատճառը գուցե թե կարելի է փնտրել, Ալ.Թոփչյանի ձևակերպմամբ, «խորհրդանիշների խորհրդանիշների» չափազանց խստության արդյունքում:

Այսքանով հանգիստ պետք է նշել նաև, որ աստվածաշնչյան-բնապաշտական յուրօրինակ զուգորդումները Հ. Մովսեսի ստեղծագործություններում միշտ նորոգ են պահում տիեզերական ասեղծվածի հարաշարժության խորհուրդը, և դեպի «ոսկեղեն դղյակ» բանաստեղծի ձգտումը դառնում է նախախնամության գաղտնիքներին սերվելու հոգևոր մղումի արտահայտություն.

ոսկեղեն դղյակ, դեպի քեզ քայլեմ
ու հալվեմ երկնքից կախված
լուսեղեն զնգուն դեղերիդ:

Բանաստեղծական վերոհիշյալ անուններով, անշուշտ, չի ամբողջանում այս սեղմագի ընդհանուր դիմապատկերը: Նրանց շարքերում այսօր էլ շարունակում են ստեղծագործել

այնպիսի հետաքրքիր բանաստեղծներ, ինչպիսիք են Հովիկ Հովհաննեսյանը, Էդվարդ Միլիտոնյանը, Այտուշեն Ղազարյանը, Հրաչյա Թադևոսյանը և էլի շատ ուրիշներ, որոնք յուրովի նպաստեցին այդի հայ պոեզիայի զարգացման բնականոն գործընթացին: Միևնույն ժամանակ, վերոնշյալ դիտարկումները հատուկ միտումներ չունեին գիտական քննության առնելու հիշատակված բանաստեղծների ստեղծագործությունները: Նպատակն այստեղ սերնդի բանաստեղծական հետագծի մեջ շարժման ընդհանուր ուրվագծումն է, նրա լուծված ու չլուծված հիմնախնդիրների ընթացքավորումը հետևելու ընդամենը մի փորձ:

60-ականների ստեղծագործական փորձի անմիջական ժառանգորդները, այնուամենայնիվ, չունեցան իրենց ընդգծված ժամանակը: Նրանց երկերում այս կամ այն եղանակով իրենց արտահայտությունը գտան գեղարվեստական ճաշակի ու ըմբռնումների արդեն իսկ հաղթահարված ձևերն ու մեթոդները, սակայն իրենց հերթին նրանք ձեռնպահ մնացին միմիայն իրենց պատկանող անցման որոշակի փուլ ազդարարելու միտումներից: Ինչ խոսք, այս ամենի համար նրանք նախ ունեին մի շարք արդարացնող հանգամանքներ. ասպարեզ իջնելուն պես այս սերունդը հանդիպեց իր անմիջական նախորդի կապակցությամբ սուր և իրարամերժ այնպիսի տեսակետների, որ որևէ ճանապարհի հստակ կողմնորոշումը, մեղմ ասած, դյուրին չէր: Գրաքննադատության համար թիրախ էին դարձել ոչ միայն ժամանակի գեղարվեստական մեթոդների ու եղանակների փոխազդեցություններն ու մոդեռնիստական հայացքները, այլ նաև ժամանակակից մարդը, գրական նոր հերոսը՝ մինչ այդ անծանոթ կեցվածքով ու պահանջներով:Եվ այդ հերոսն արդեն չէր կարող անմիջականորեն թելադրել իր սկզբունքներն ու կայուն կենսակերպը, քանզի հենց իր ներկայությամբ արդեն կասկածի տակ էր առնված նույն գրաքննադատության կողմից: Այսքանը, սակայն, սոսկ որպես արդարացում: Այնինչ իրական թելադրողը ոչ միայն ժամանակն է և կամ գրական հերոսը, այլև բանաստեղծի անհատականությունը, որ վերջնական արդյունքում խոսում է նույն այդ ժամանակի և գրական հերոսի անունից: Եվ տվյալ պարագայում ընդգծված անհատականության ու նախորդ սերնդի ճնշող ներկայության պայմաններում սնվիական կնիքն ունենալու ձգտումը պարզապես դարձել էր սակավ հավանական:

Այսքանով հանդերձ, այնուամենայնիվ, ժամանակակից հայ պոեզիայի շարժումն այսօր չի կարելի չնկատել: Այլ խնդիր է, թե պատմական իրադարձությունն ինչպիսի դեր ու նշանակություն է տալիս այդ շարժմանը, ինչպիսի ներքին ու արտաքին պայմաններ ստեղծում նրա ընդհանուր կանոնակարգման համար: Մի փաստ, որ ինքնին արդեն անհերքելի է - առկա է գործընթացը, որ ժամանակի հետ ենթարկվելու է անհրաժեշտ խմբագրումների ժառանգության յուրօրինակ հայտ ներկայացնելով հետագա սերունդներին:

Ամփոփում

70-ական թթ. հայ բանաստեղծությունը քննության ու գնահատման արժանի մեծ տարածություն է պահանջում, քանզի այն արժևորվում է ոչ միայն իր բնագրային ընձեռած հնարավորություններով, այլ, որ ոչ պակաս կարևոր է, ստեղծած գեղարվեստական միջավայրով: Ներկա վերլուծության փորձը հիմք է տալիս եզրահանգելու, որ, տիրապետելով ժամանակաշրջանի գեղարվեստական ինֆորմացիայի, այս սերունդը հանդես եկավ ինչպես հայացքների ու սկզբունքների ընդհանրականությամբ, այնպես էլ անհատականությունների տարբեր դրսևորումներով, ինչն էլ ընդլայնեց նրանց ընդգրկած ժամանակն ու տարածությունը:

Резюме

Армянская литература 70-х годов требует большого пространства в обсуждении и оценке, ибо она оценивается не только своими рукописными возможностями, но и , что не менее важно, созданной художественной средой. Опыт нынешнего анализа позволяет делать вывод, что владея художественной информацией современной эпохи, это поколение выступило общностью взглядов и принципов, так и различными проявлениями индивидуальностей, что и расширило охваченное им время и пространство.

Մատենագրություններ

1. Եղիազարյան Ա., Մարդը ներսից, «Սով. գրող» հրատ.,1985թ.:
2. Սարուխան Հր.,վկայություններ, «Հայաստան» հրատ.,1989թ.:
3. Սիրունյան Ղ., Երիկուն բարի, դարձիր առավոտ, «Սով. գրող» հրատ.,1983թ.:
4. Շեկոյան Ա., Բալստ, «Սով. գրող» հրատ., 1989թ.: